COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

«Գործընկերություն հանուն լավ կառավարման» Արևելյան գործընկերության երկրների համար առցանց միջոցառում. քաղաքացիների կյանքի բարելավում ավելի լավ կառավարման միջոցով

Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Մարիա Պեյչինովիչ Բուրիչի տեսաուղերձը

Սիրելի բարեկամներ,

Այս տարվա մի շարք այլ միջոցառումների նման, այս մեկն էլ տեղի է ունենում սպասվածից մի փոքր ուշ և առցանց, այլ ոչ թե առերես ձևաչափով:

Այդպիսին է աշխարհում մերօրյա իրողությունը:

Կարևորն այն է, որ միջոցառումը տեղի է ունենում՝ գնահատելով այն ուղին, որով «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագիրը շարունակում է իրականացվել ի նպաստ Արևելյան գործընկերության երկրների քաղաքացիների, նույնիսկ այս դժվարին ժամանակներում և հնարավորություն ընձեռում մտորելու, թե է՛լ ինչ կարող ենք անել:

Դա կարևոր է, քանի որ թեև COVID-19 համավարակը հանգեցրել է մարդկային կյանքերի ողբերգական կորուստների, այնուամենայնիվ, մենք չպետք է թույլ տանք, որպեսզի այն կործանի մեր կենսակերպը, մեր ընկալումը, թե ով ենք մենք, ինչն ենք արժևորում և ինչ իրավունքներ ունի յուրաքանչյուր եվրոպացի:

Եվրոպական միությունը և Եվրոպայի խորհուրդը կիսում են հավատը մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության նկատմամբ։

Դրա շնորհիվ մենք կարողացել ենք միասին աշխատել Արևելյան գործընկերության երկրների հետ՝ իրագործելով յուրօրինակ, բազմառարկայական, բազմամյա և բազմերկիր ծրագիր։

«Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագիրն օգնում է ներպետական օրենսդրությունը և դրա կիրառումն առավել սերտորեն համապատասխանեցնել եվրոպական չափանիշների և հզորացնում ներքին բարեփոխումներ կատարելու՝ ներպետական իշխանությունների կարողությունները։

Այս աշխատանքի ներկա՝ երկրորդ փուլը սևեռվում է հետևյալ ոլորտների վրա՝ դատաիրավական բարեփոխումներ, խտրականության դեմ պայքար, կոռուպցիայի դեմ պայքար, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելում։

Եվ այն ապահովված է 17.5 միլիոն եվրո բյուջեով, որից 80%-ը ֆինանսավորվում է Եվրոպական միության և 20%-ը՝ Եվրոպայի խորհրդի կողմից։

Ծրագրի աշխատանքը մեծապես նպաստում է Արևելյան գործընկերության երկրներում Եվրոպայի խորհրդի Գործողությունների ծրագրի և Եվրոպական միության 2020 թվականի թիրախային արդյունքների իրականացմանը։

Սակայն դրա կարևորությունն այն է, թե ինչ նշանակություն ունի այն իրենց առօրյա կյանքով ապրող մարդկանց համար։

Մեր համատեղ աշխատանքը տալիս է շոշափելի արդյունքներ՝ ապահովելով ավելի արդյունավետ և գործուն ծառայություններ քաղաքացիների համար, որոնց մոտ, իր հերթին, մեծանում է վստահությունը պետական հաստատությունների նկատմամբ։

Ահա թե ինչու առանձին երկրներ իրենց գոհունակությունն են հայտնել ստացած աջակցության վերաբերյալ, ներառյալ՝COVID-19 ճգնաժամի ընթացքում շարունակվող ներպետական բարեփոխումների իրականացման կապակցությամբ։

Այդ պատճառով էր նաև Եվրոպական խորհուրդը մայիս ամսին Արևելյան գործընկերությանը «նորացված և ուժեղացված հանձնառության» կոչ արել։

Այդուհանդերձ, Եվրոպական խորհուրդը նշել է, որ ավելի մեծ առաջընթաց է անհրաժեշտ իրավունքի գերակայության երաշխավորման համար։

Ես գիտեմ, որ միասին կարող ենք հասնել այդ նպատակին։

Այս միջոցառումը հնարավորություն է ընձեռում խորհել ձեռնարկված քայլերի մասին և թե է՛լ ինչ կարելի է անել նույնիսկ անորոշության և կտրուկ փոփոխությունների այս ժամանակաշրջանում։

«Գործընկերություն հանուն լավ կառավարման» ընթացիկ ծրագիրը շարունակվելու է մինչև 2021 թվականը։

Այսպիսով, մաղթում եմ ամենայն բարիք և հաջողություն մեր ներկայիս և հետագա նախաձեռնություններին այս շրջանում և դրանից հետո։